ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **16/02/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Մարինե Գրիգորյանը, Հրաչյա Դանիելյանը, Անի Հարությունյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գարիկ Հակոբյանը, Աննա Կարապետյանը, Երվանդ Եղիազարյանը, Դավիթ Հարությունյանը, Դավիթ Այվազյանը, Կորյուն Մուրադյանը, Նարա Հովհաննիսյանը, Վարդան Խաչատրյանը, Արմեն Խաչատրյանը, Նարեկ Հովսեփյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստն ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան օրակարգը հաստատել համայնքի ղեկավարը ներկայացրեց, որ անհրաժեշտություն է առաջացել օրակարգ ներառել ևս 2 հարց.

1. Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

Դրվեց քվեարկության
Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-0

Օրակարգից հանվեց «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց և անժամկետ օգտագործման հանձնելու մասին» հարցը, քանի որ պետք է կատարվի հողամասի կատեգորիայի փոփոխություն:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2024 թվականի փետրվարի 16-ի հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 99-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
   2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին.
   6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարման և ամենամյա գույքագրման փաստաթղթերի կարգը հաստատելու մասին.
   7) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 14-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.
   8) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի թիվ 16-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   9) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   10) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 90-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   11) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրում գտնվող կառուցապատման իրավունքով տրամադրված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական տարածքներ նպատակային նշանակության հողամասերի կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելու մասին.
   12) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 38-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
   13) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին.
   14) Շարժական գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին.
   15) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 15-ի թիվ 037-Ա որոշումը հաստատելու, «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և կանոնադրության փոփոխությունները հաստատելու մասին.
   16) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանի վարման կարգն ու ձևը հաստատելու մասին.
   17) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 09-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
   18) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին.
   19) Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին.

20) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 007-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 99-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 99-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2328549.9 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2395008.9 հազար դրամ» բառերով:
2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 2328549.9 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3274301.4 հազար դրամ» բառերով:
3. Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0 դրամ» բառերը փոխարինել «դեֆիցիտը (պակասուրդը)՝ 879292.5 հազար դրամ» բառերով:
4. Որոշման 2-րդ կետի 1-ին հատվածում (համայնքի բյուջեի եկամուտները) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 1-ի:
5. Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 2-ի:
6. Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 3-ի:
7. Որոշման 5-րդ կետի 4-րդ հատվածում (համայնքի բյուջեի մնացորդի տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 4-ի:
8. Որոշման 6-րդ կետի 5-րդ հատվածում (համայնքի բյուջեի մնացորդի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները) կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելված 5-ի:

Զեկուցողը մանրամասը ներկայացրեց բյուջեում կատարվող փոփոխությունները և լրացումները: Նշեց, որ նախագծի ընդունումից հետո բյուջեի ծախսային մասը կավելանա 945751524.2 ՀՀ դրամով:

Հարց ու պատասխանից հետո դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-3 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 008-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով Սիսիան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1-5 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը մանրամասը ներկայացրեց Սիսիան համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Որոշումն ընդունելուց հետո միջնաժամկետ ծախսային ծրագիրը հիմք կհանդիսանա 2024-2026թթ. բյուջեների ծախսային և եկամտային մասերի պլանավորման համար:

Հ. Առաքելյանը հարցրեց, թե ինչո՞վ է պայմանավորված, որ որոշ բնակավայրերի աղբահանությունը պետք է սկսվի 2025թ.-ից:

Ե. Եղիազարյանը պատասխանեց, որ մեքենաների քանակը չի հերքիում աշխատանքները իրականացվեն, աղբամանները քիչ են:

Ս. Վարդանյանը առաջարկեց Իշխանասար բնակավայրի համար ինչ-որ ծրագիր նախատեսել:

Ա. Հակոբջանյանը ներկայացրեց, որ Իշխանասար բնակավայրում նախատեսված է ասֆալտապատում իրականացնել, բացի դրանից մանկապարտեզ կառուցել, քանի որ 20-ից ավել երեխա կա:

Հարցը դրվեց քվեարկության և քվեարկության ժամանակ դահլիճում չէին ավագանու անդամներ Կ. Հովաննիսյանը, Գ. Դավթյանը:

Կողմ-13 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 009-Ա/

Նախքան 3-րդ հարցին անդրադառնալը ՀՀԿ խմբակցության անդամները հեռացան դահլիճից:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 010-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 011-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 012-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և 59-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարման և ամենամյա գույքագրման փաստաթղթերի կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքային գույքի կառավարումն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է պարտականությունները վերապահել աշխատակազմի բաժիններին, որպեսզի հետագայում պատասխանատվության հստակ տարանջատում լինի գույքագրման փաստաթղթերի կազմելու ընթացքում:

Հ. Հակոբյանը հարցրեց, եթե նոր համայնք է, պետք է բոլոր պայմանագրերը նորից կնքվի՞:

Դ. Այվազյանը պատասխանեց, քանի որ նոր համայնք է ձևավորվել, բոլոր կարգերը վերանայվում է և հաստատվում նորը, իսկ պայմանագրերը՝ ոչ, շարունակվում են: Համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Կարապետյանը ավելացրեց, որ քաղաքացիաիրավական իրավունքներն ու պարտականությունները, որպես իրավահաջորդ փոխանցվում են համայնքից համայնք:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 013-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման մեջ կատարել լրացում և որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի «Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը» «51» տողից հետո ավելացնել «52» տողը.

52	Անասնաբույժ	3	140000

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը ներկայացրեց, որ Սիսիան համայնքի գյուղական բնակավայրերի բնակչության հիմնական մասը զբաղվում է անասնապահությամբ՝ անհրաժեշտ է ունենալ անասնաբույժի հաստիք, որը կնպաստի համայնքի բնակչությանը համաճարակային վտանգներից զերծ պահելուն, ինչպես նաև կկանխի կենդանիների անկումը:
Հայկ Հակոբյանի հարցին նախատեսված աշխատավարձից բացի այլ ծախսեր չկա՞ն և ինչպե՞ս է կարգավորվելու: Կ. Իվանյանը պատասխանեց, որ պետությունը պատվիրակված լիազորություններ ունի անասնաբույժների, որոնք ներկա պահին կատարվում են, մենք տրամադրում ենք լրացուցիչ աշխատավարձ և հարմար ձևով գրաֆիկը կբաշխենք:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 014-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 2-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը հիմնավորեց, որ փոփոխությունը կատարվում է աշխատանքների ծավալից և աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 015-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ26-Ի ԹԻՎ 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն համարվող գույքի /հողամասերի, շենքերի և շինությունների/ օտարման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 98-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման հավելվածի 1-ին տողում «36» թիվը փոխարինել «30» թվով, «ավտոտնակ» բառը փոխարինել «կիսանկուղ» բառով և «67608» թիվը՝ «56340» թվով.
   2) որոշման հավելվածի 2-րդ տողում «50» թիվը փոխարինել «50.2» թվով և «93900» թիվը՝ «94276» թվով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Զեկուցողը հիմնավորեց, որ տեղի է ունեցել վրիպակ, անհրաժեշտ է ուղղել այն:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 016-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 90-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
«7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Վ. Խաչատրյանը հիմնավորեց, քանի որ տեղական տուրքերի և վճարների մասին ավագանու որոշումը չի հրապարակվել, անհրաժեշտություն է առաջացել փոխել որոշման 7-րդ կետը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 017-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԱՅՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման կարգը, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2012 թվականի սեպտեմբերի 26-ին տրված «Օգտակար հանածոների արդյունահանման» թիվ ՇԱԹ-29/245 թույլտվությունը և լեռնահատկացման թիվ ԼՎ 245 ակտն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի տնօրենի 2024 թվականի փետրվարի 02-ի դիմումը.

1. Տալ համաձայնություն օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թույլտվություն ունեցող իրավաբանական անձ՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին 24.02.2014թ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Գորայք բնակավայրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր կատեգորիայի հողամասերի՝ վկ. 08022024-09-0020 0.002հա, վկ. 08022024-09-0010 5.3548հա, վկ. 08022024-09-0030 58.7221հա, վկ. 08022024-09-0027 1.9284հա, վկ. 08022024-09-0021 14.5756հա, վկ. 08022024-09-0024 78.5423հա- 17.345հա, վկ.08022024-09-0026-ից 638.4453հա կառուցապատման իրավունքի ժամկետը երկարաձգելու 10 (տասը) տարով՝ մինչև 2034 թվականի փետրվարի 24-ը, տարեկան 1հա 124200 (հարյուր քսանչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ արժեքով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ս. Վարդանյանի հարցին, արդյո՞ք Սիսիանի համայնքի վարչական տարածքում են միայն հողերը, Վ. Խաչատրյանը պատասխանեց, որ այո:
Ա. Աղաջանյանը առաջարկեց վերանայել գումարի չափը և բարձրացնել, քանի որ շահույթ հետապնդող հիմնարկ է:
Վ. Խաչատրյանը պատասխանեց, որ սոցիալական ծրագրեր էլ են իրականացնելու, իսկ Կ. Մուրադյանը լրացրեց, որ եթե հիմա որևէ ավելացում արվի, ժամանակը կձգձգվի և ամեն ամիս համայնքի բյուջեում 10մլն. դրամի կորուստ կլինի:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 018-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող հողամասն անհատույց սեփականության իրավունքով (նվիրատվություն) Հայաստանի Հանրապետությանը օտարելու մասին» թիվ 38-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման վերնագրի և 1-ին կետի «(նվիրատվություն)» բառերը փոխարինել «(նվիրաբերություն)» բառերով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 019-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ մասով և 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը,

1. Բաց մրցույթով, 2024 թվականի ընթացքում, 25 տարի ժամկետով, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման նպատակով վարձակալության տրամադրել Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 020-Ա/

Լսեցին

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքը՝ համաձայն հավելվածի, 3 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել համայնքի բնակիչներին, ովքեր ունեն գյուղատնտեսական տեխնիկա օգտագործելու մասնագիտական որակավորում՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Զեկուցողը ներկայացրեց, որ Սիսիան համայնքի Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան և Որոտնավան բնակավայրերում առկա են համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույք: Անհրաժեշտ է այդ գույքը վարձակալության իրավունքով տրամադրել քաղաքացիներին՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:
Ավագանու անդամ Ա. Գրիգորյանը հեռացավ դահլիճից:
Ա. Աղաջանյանը ներկայացրեց, որ Գորայքի գութանը և հողաֆրեզը ձեռք է բերվել 2018թ., իսկ Ծղուկի գույքը՝ 2023թ.: 750000 դրամը բնակիչը ի վիճակի չի լինելու վճարելու, առաջարկեց վերանայել գները և հարցրեց, թե ինչպե՞ս է որոշվել գումարի չափը:
Ա. Խաչատրյանը պատասխանեց, որ շուկայական գներով է որոշված և քննարկվել է վարչական ղեկավարների հետ:
Կ. Հովհաննիսյանը առաջարկեց գումարի չափը թողել նույնը, եթե ոչ մեկը չվերցնի աշխատանքը կատարելու համար, կվերանայնեք և կկատարենք գումարի փոփոխություն:

Կողմ-10 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 021-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ԹԻՎ 037-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ «ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔՆԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 64-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի դ) կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 15-ի ««Սառնակունքի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին» թիվ 037-Ա որոշումը:
2. Հաստատել «Սիսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետում կատարվող փոփոխությունը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քանի որ Ս. Սահակյանը գտնվում է գործուղման մեջ, հարցը զեկուցեց աշխատակազմի քարտուղար Կ. Իվանյանը: Հիմնավորեց, որ Սառնակունքի ՆՈՒՀ-ի սաների սակավաթիվ լինելու հետևանքով անհրաժեշտ է միավորել «Սիսիանի համայնքի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին և միավորվելու արդյունքում կունենանք կրթության որակի բարելավում:

Կողմ-10 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 022-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանում հավաքների իրազեկումների գրանցամատյանի վարման ձևը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 023-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ԹԻՎ 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու համայնքի ավագանու կանոնակարգով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 09-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 3-րդ կետի 1)-ին ենթակետի « Երվանդ Լորիկի Եղիազարյան» բառերը փոխարինել «Տիգրան Հովհաննեսի Համբարձումյան» բառերով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 024-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մարտի 15-ին, ժամը 16:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 025-Ա/

Լսեցին

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 92-րդ հոդվածի 4-րդ մասով, հաշվի առնելով «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն» ՍՊԸ-ի և Սիսիան համայնքի միջև 2024 թվականի փետրվարի 7-ին կնքված ֆինանսավորման համաձայնագիրն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի իրականացման նպատակով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի վարչական շենքում գտնվող քաղաքացիական սպասարկման գրասենյակի կապիտալ վերանորոգման ծրագրի մեջ որպես գործընկեր ներգրաված, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքին դրամաշնորհային միջոցները ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական համակարգում արտաբյուջետային հաշիվ բացել:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 026-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի ներկայացրած ամենամյա հաշվետվությունը.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն 1-6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 027-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____